ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

30 օգոստոսի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

115
(2965)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՈՐՔԱՆ ՎԱՐԿ ՈՒՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՀՀ պետական պարտքը շարունակում է աճել: «Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ ՀՀ պետական պարտքը 2024 թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 4,718.9 մլրդ դրամ (12.2 մլրդ ԱՄՆ դոլար), որից 2,424.4 մլրդ դրամը (6.3 մլրդ ԱՄՆ դոլարը) կազմել է արտաքին պարտքը, 2,294.6 մլրդ դրամը (5.9 մլրդ ԱՄՆ դոլարը)՝ ներքին պարտքը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դոլարային արտահայտությամբ ՀՀ պետական պարտքն աճել է 9.5%-ով, իսկ դրամային արտահայտությամբ՝ 10.0%-ով: Կառավարության պարտքը նույն միտումներն է ունեցել. դոլարային արտահայտությամբ աճել է 10.3%-ով, իսկ դրամային արտահայտությամբ՝ 10.8%-ով:

Հետաքրքիրն այն է, որ հեղափոխության առաջին տարիներին պետական պարտքի չափը նվազեցնելու մասին վանկարկող իշխանություններն այնքան են խախտել պետբյուջեի ֆինանսական ելքերն ու մուտքերը, որ հատել ենք պետական պարտքի թույլատրելի շեմը:

«Ժողովուրդ» օրաթերթը կառավարությունից պահանջել էր տրամադրել, թե 2018 թվականից մինչեւ 2024 թվականի օգոստոսի 8-ը.

1. քանի՞ վարկ է ձեւակերպվել Հայաստանի Հանրապետության անունից
2. նշված վարկերը միասին որքա՞ն (դրամ) են կազմում
3. ներկայացված վարկերը ո՞ր երկրներից եւ ո՞ր բանկերից են վերցված. բոլոր վարկերի վերաբերյալ ներկայացրե՛ք տեղեկությունը՝ հատ առ հատ:
4. առանձին-առանձին ներկայացրեք նաեւ, թե ո՞ր վարկը քանի՞ տարով է ձեւակերպված:

«Հատ» բառը շեշտված չէ պատահաբար, այն հարցմանն առավել հստակ պատասխան ստանալու համար է:

Ինչեւէ, ինչպես ակնկալում էինք՝ պատկերը, մեղմ ասած, վախեցնող էր:

Նախ, որպես փաստ արձանագրենք, որ 2018 թվականից հետո ձեւակերպված վարկերի մարման ժամկետը 25 տարի է՝ գրեթե մինչեւ 2050 թվականը, ավելի կոնկրետ՝ ժամկետները ձգվում են Հայաստանի վերափոխման մինչեւ 2050 թվականի ռազմավարության ավարտը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Նիկոլ Փաշինյանը սեպտեմբերի մեկին այցելելու է Կիրանց գյուղ: Կիրանցի բնակիչները մեզ փոխանցում են, որ Նիկոլ Փաշինյանը մասնակցելու է գյուղի Գագիկ Վարդանյանի անվան հիմնական դպրոցի բացմանը, որը Փաշինյանի իշխանության օրոք դարձել է սահմանամերձ եւ թշնամու կողմից մոտ դիտարկելի: Գյուղի բնակիչներից շատերը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պատմեցին, որ գյուղում 5 առաջին դասարանցի կա, որոնց մի մասը դպրոց չի հաճախելու հայրենի գյուղում, քանի որ ծնողները խիստ մտահոգ են. դպրոցը նոր գծված սահմանից ընդամենը 40-50 մետր հեռավորության վրա է ու ադրբեջանցի սահմանապահների թիրախում: Փաշինյանը, սակայն, գնալու է իր քաղաքական դիվիդենտները շահելու, թե դպրոցի բացման է մասնակցում: Հիշեցնենք, որ ավելի վաղ Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, որ եթե հարկ լինի, բնակիչներից ներողություն խնդրելով՝ Կիրանցում նոր դպրոց կկառուցեն. «Մենք պատրաստ ենք անվտանգության հավելյալ միջոցներ գործադրել նոր դպրոցը շահագործելու համար, բայց եթե հավելյալ անվտանգային միջոցներից հետո էլ տեղի բնակիչները հարմար չգտնեն երեխաներին այդ դպրոց ուղարկել, մենք պատրաստ ենք կառուցել նոր դպրոց, իսկ այդ շենքը ծառայեցնել այլ նպատակի»: Հիշեցնենք նաեւ, որ նույն դպրոցի մասին «Հանրային» հեռուստաընկերության եթերում խոսելով՝ Փաշինյանը հայտարարել էր, թե անվտանգության նկատառումներից ելնելով՝ ծառ կտնկեն դպրոցի տարածքում:



Երեկ՝ երեկոյան, Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ ՔՊ-ն հերթական նախաձեռնող նիստն է հրավիրել: Այս անգամ նիստի հիմնական զեկուցողը աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանն է եղել, որն իր ոլորտում կատարված աշխատանքն է ներկայացրել: Նիստին ներկա է եղել նաեւ ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հերթական անգամ ՔՊ նիստից առաջ բոլոր ներկաների հեռախոսները հավաքել են՝ «սլիվներից» խուսափելու համար: Նիստը տեւել է 3-4 ժամ: Մեր տեղեկություններով՝ ՔՊ նիստը բավականին ջերմ մթնոլորտում է անցել, Նիկոլ Փաշինյանն ու ՔՊ-ականները սիրալիր վերաբերմունք են դրսեւորել նախարար Նարեկ Մկրտչյանի նկատմամբ եւ, ըստ էության, ցույց են տվել, որ գոհ են նրա աշխատանքից:

«Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ վիճակագրական կոմիտեից տեղեկանում է, որ 2024 թ. հուլիսին շինարարության աճը կազմել է 17.7%՝ հունիս ամսվա համեմատ դանդաղելով 0.3 տոկոսային կետով, իսկ հունվար-հուլիս ամիսների աճը կազմել է 16.1%՝ արագանալով 0.4 տոկոսային կետով: Վերջինս հիմնականում պայմանավորված է բնակարանային շինարարության աճով, սակայն հատկանշական է, որ սկսել են աճել բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալները, այն դեպքում, երբ նախկինում աճը տեղի էր ունենում հիմնականում կազմակերպությունների միջոցների հաշվին: Այսինքն՝ հիփոթեքային վարկերը դարձել են շինարարությունն առաջ մղող խթան. մարդկանց վճարած գումարով մի ամբողջ շենք է կառուցվում: Հետաքրքիր փաստ կարելի է արձանագրել, որ շինարարական բումը, որին հաջորդեց եկամտահարկի վերադարձի օրենքով բնակարանների ձեռքբերումը, սառույցի պես կանգնել է տեղում եւ դադարում է առաջ գնալուց: Տնտեսագետները նշում են՝ կարելի է սպասել նաեւ գնի անկման, որը աստիճանաբար կբերի ոլորտի ապակայունացման: Բնակարանաշինության դեպքում զրո ամբողջ նվազումն էլ կարող է հանգեցնել ֆինանսական անկման կառուցապատողների համար: Այսինքն՝ առաջարկ կա՝ գինը ցածր է, պահանջարկ կա՝ բարձրանում է: «Ժողովուրդ» օրաթերթի ուսումնասիրությունները փաստում են, որ եկամտահարկի վերադարձի օրենքի չեղարկումից հետո, հնարավոր է, բնակարանների վաճառքը քչանա, սակայն սանդղակը գուցե կրկին բարձրանա՝ մարզերում մեկնարկելուց հետո:

ԶՐՈՒՅՑ

ՏԵՍԱԽՑԻԿՈՎ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՆՎԱՔԵՑՆԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է հրատարակիչ, հասարակական գործիչ Արմեն Մարտիրոսյանի հետ, մասնավորապես քննարկելով ներքին գործերի նախարարության նոր առաջարկը՝ 100 քմ մակերեսով մանրածախ օբյեկտների, վառելիքի վաճառքի կետերի և հանրային սննդի՝ ավելի քան 50 քմ տարածքով օբյեկտների, բանկերի, գրավատների, դեղատների, սրճարանների, ռեստորանների մուտքի ու շինության մյուս կողմերում տեսախցիկներ տեղադրելու և դա օրենքով պարտադիր դարձնելու վերաբերյալ:



-Պարոն Մարտիրոսյան, կառավարությունը նոր նախագիծ է հեղինակել, որն Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունվել է: Առաջարկվում էր 100 քմ-ից մեծ մակերես ունեցող առեւտրի օբյեկտները եւ 50 քմ-ից ավելի մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտները եւ հանրային այլ վայրեր տեսախցիկով, ամենօրյա ռեժիմով հսկելու օրինագիծ: Նախագծի հեղինակներն են մասնավորապես ՆԳՆ-ն եւ իշխանական պատգամավոր Հայկ Սարգսյանը: Դուք եւս անդրադարձել էիք այս հարցին եւ քննադատել՝ նշելով, որ սրանով եւ բիզնեսն է Հայաստանում վտանգի ենթարկվելու, եւ ոստիկանությանը անհարկի հնարավորություն է տրվելու քաղաքացիների վերաբերյալ խիստ անձնական տվյալների հասանելիություն ստանալ: Ի՞նչ կասեք այժմ:

-Կսկսեմ անտվանգային հարցից. նախ, 44-օրյա պատերազմի ժամանակ թուրքական եւ ադրբեջանական տարբեր ցանցահեններ կոտրել էին բազմաթիվ տեսախցիկներ եւ այդ ողջ տեղեկությունը տեղադրել էին համացանցում: Արդյոք որեւէ մեկը կարո՞ղ է երաշխավորել, որ Հայաստանի ոստիկանությունը այնպիսի համակարգ կստեղծի, որ նմանատիպ գործողություններ այլեւս չեն կրկնվի: Յուրաքանչյուր գործարար ունա՞կ է այդ համակարգը տեղադրելու եւ սպասարկելու այնպես, որ հակառակորդը դրան հասանելիություն չունենա, եւ արդյոք Թուրքիան, Ադրբեջանը կամ Ռուսաստանը ավելի զարգացած չե՞ն լինելու այս բնագավառում, քան Հայաստանը: Ո՞վ կարող է երաշխավորել, որ յուրաքանչյուր 50 քմ տարածք ունեցող հայաստանցի ավելի ունակ է լինելու պաշտպանելու: Հետո, ինչո՞ւ պետք է որեւէ քաղաքացու սրճարան կամ հյուրանոց գնալը, խանութ մտնելը եւ այնտեղից որեւէ ապրանքով դուրս գալը որեւէ ոստիկան իմանա: Ինչո՞ւ պետք է ոստիկանն իմանա, որ քաղաքացին մտնում է բանկ եւ այնտեղից գումար կանխիկացրած դուրս գալիս: Ոստիկանության վերաբերյալ, թե՛ խորհրդային, թե՛ անկախ շրջանի մեր պատմությունը մատնացույց է անում, որ խարդախություններում, գողություններում ամենաշատը հենց ոստիկաններն են ներգրավված:

-Այսինքն՝ այստեղ մարդկանց իրավունքի, անձնական տարածքի խախտում կա նաեւ:

-Իհարկե կա, եւ աբսուրդային է, որ իբրեւ այդ օրենքի կիրառման օրինակ՝ ներկայացնում են, թե Լոնդոնում որքան լավ է գործում այն: Հաշվի չեն առնում՝ Լոնդոնում բողոքականներ են, երբ Հայաստանում կրոնը կփոխեն բողոքականության, երբ կանցնի 25-30 տարի եւ հայաստանցիները կունենան այնպիսի վարքագիծ, ինչպիսին պրոտեստանտները, որն էլ նշանակում է՝ շատ բարձր պետք է լինի ՀՆԱ միջին ցուցանիշը, աշխատանքի արդյունավետությունը, կենսամակարդակը, երբ հայաստանցիները գիտությամբ կզբաղվեն, կնվաճեն տիեզերքը, այդ ժամանակ, իհարկե, թող ընդունեն օրենքը: Նրանք, սակայն, բերում են կայացած պետության ու ժողովրդի վարքագիծ եւ ասում՝ ոստիկանները պետք է վերահսկեն քաղաքացիներին: Ինչպե՞ս են կարողանում համեմատվել Լոնդոնի հետ. Մեծ Բրիտանիայի օրենքում սեւով սպիտակի վրա գրված է. «Քաղաքացի՛, ես քեզ սիրում եմ», մինչդեռ այստեղ ոստիկանները քաղաքացիների հետ վարվելու կանոններին տիրապետել չեն ուզում, եթե անգամ որեւէ պատահականությամբ քաղաքացին հայտնվի ոստիկանական բաժանմունքում, նրան վերաբերվում են ինչպես գողի եւ հանցագործի: Ինչպե՞ս է քաղաքացիների հետ խոսում պարեկային աշխատակիցը. թեպետ հույս ունեինք, որ նոր պարեկների ներդրման համակարգը որեւէ դրական փոփոխության կբերի, բայց, միեւնույնն է, տեսնում ենք նրանց կողմից անարգանք քաղաքացիների նկատմամբ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ

ՋԱԽԱՐՈՎԱՆ՝ ԵՌԱԿՈՂՄ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների եռակողմ պայմանավորվածությունները կասկածի տակ դնելու փորձերը խիստ վտանգավոր են, քանի որ դրանք հայ-ադրբեջանական հաշտեցման հիմքն են: Այս մասին հերթական ճեպազրույցի ժամանակ ասել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

Նրա խոսքով՝ ՌԴ-ում կարծում են, որ եռակողմ պայմանավորվածություններին այլընտրանք այս պահին չկա, եւ դա չեն հերքում նաեւ Հայաստանում:

«Պայմանավորվածություններն ընդգրկում են Բաքվի եւ Երեւանի միջեւ կարգավորման բոլոր առանցքային ուղիները, ներառյալ՝ խաղաղության պայմանագրի մշակումը, սահմանների դելիմիտացիան, սահմանազատումը, տարածաշրջանում տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակումը, քաղաքացիական հասարակության գծով շփումների զարգացումը: Դրանք կասկածի տակ դնելու փորձերը չափազանց վտանգավոր են, կարող են կողմերի փոխադարձ պարտավորությունների վակուում ստեղծել երկկողմ հարաբերությունների շարունակական չկարգավորված լինելու պայմաններում», -նշել է դիվանագետը:

Նա նաեւ հավելել է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարները հաստատել են կառուցողական երկխոսությունը շարունակելու մտադրությունը:

«Ի դեպ, մենք ավելի վաղ նշել էինք, որ հայ-ադրբեջանական կարգավորումը առարկայական քննարկվել է օգոստոսի 18-19-ին Ռուսաստանի նախագահի Ադրբեջան կատարած պետական այցի շրջանակներում: Դրան անդրադարձ է կատարվել նաեւ օգոստոսի 23-ին՝ ՌԴ նախագահի եւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցի ընթացքում: Ի դեպ, Երեւանի իշխանություններից, պաշտոնական իշխանություններից կարող եք ճշտել՝ այս բանակցությունների ընթացքում հայկական կողմը պաշտոնապես տեղեկացրե՞լ է, որ եռակողմ համաձայնագրերն այլեւս վավերական չեն համարում: Ինձ այդ մասին ոչինչ հայտնի չէ: Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարները հաստատել են կառուցողական երկխոսությունը շարունակելու իրենց հանձնառությունը:

Ռուսաստանի նախագահն իր հերթին ընդգծել է մեր կողմի պատրաստակամությունը, որ այսուհետ եւս անհրաժեշտ աջակցություն ցուցաբերել գործընկերներին կարգավորման գործընթացի բոլոր ուղղություններով՝ 2020-2022 թթ.-ին ձեռք բերված բարձր մակարդակի եռակողմ պայմանավորվածության հիման վրա»,- ասել է նա:

ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ

ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի ղեկավար կազմի եւ արտերկրում դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների տարեկան աշխատաժողովը եզրափակվել է Հայաստանի Հանրապետության Կիրանց բնակավայր, մասնավորապես՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջպետական սահման այցելությամբ: Այս մասին տեղեկացնում են ՀՀ ԱԳՆ-ից:

ՀՀ դիվանագիտական ծառայության ղեկավար կազմին տեղում ներկայացվել են իրականացված եւ ընթացիկ աշխատանքների մանրամասները:

ՈՒԶԲԵԿՍՏԱՆԸ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՆ ԿԿԱՌՈՒՑԻ

Ադրբեջանը եւ Ուզբեկստանը շարունակում են խորացնել դաշնակցային հարաբերությունները: Այդ մասին գրում է Ermenihaber.am-ը:

Երկկողմ հարաբերությունների դաշնակցային մակարդակի բարձրացման պատճառը այն է, որ Ուզբեկստանն արցախյան հարցում Ադրբեջանին բացահայտ աջակցություն է ցուցաբերել եւ ցուցաբերում:

Ուզբեկստանն Արցախում հադես է գալիս ներդրումային ծրագրերով՝ 2021-ին Վարանդայի շրջանում (Ֆիզուլի) Միրզե Ուլուղբեյի անունով դպրոց է կառուցել՝ 960 աշակերտի համար:

Ինչպես նաեւ հայտարարվել է, որ Ստեփանակերտում կկառուցվի տեքստիլ գործարան եւ աշխատանքով կապահովվի 1000 մարդու: Այդ գործարանը կլինի օկուպացված Ստեփանակերտում առաջին օտարերկրյա ներդրումը:

ԿԱՐԵՎՈՐՎԵԼ Է ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԸ

Հանդիպում է տեղի ունեցել Արցախի խորհրդարանի պատգամավորների հետ. քննարկվել է Արցախի հարցը:

ԱՀ Ազգային ժողովի նախաձեռնությամբ օգոստոսի 28-ին Արցախի ժողովրդի հավաքական հայրենադարձության եւ հիմնարար այլ իրավունքների պաշտպանության հանձնախմբի անդամները հանդիպում են ունեցել Արցախի Խորհրդարանի պատգամավորների հետ: Հանդիպմանը մասնակցել են հանձնախմբի աշխատանքները համակարգող, Հայաստանի Հանրապետության նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը, անդամներ՝ Արցախի Հանրապետության ՄԻՊ Գեղամ Ստեփանյանը, քաղաքագետ Կարեն Բեքարյանը, ներկա է եղել նաեւ ԱՀ ԱԳ նախարար Սերգեյ Ղազարյանը:

Հանձնախմբի ընդհանուր կատարած աշխատանքների մասին զեկույց է ներկայացրել աշխատանքները համակարգող, ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը: Կարեն Բեքարյանը ներկայացրել է քարոզչական դաշտում ծավալվող աշխատանքները եւ կարեւորել Արցախի հարցը վառ պահելու անհրաժեշտությունը:

Գեղամ Ստեփանյանը պատգամավորներին մանրամասներ է ներկայացրել միջազգային ասպարեզում ՀՅԴ Հայ Դատի գրասենյակների եւ այլ կառույցների հետ համագործակցության, մարդու իրավունքների եւ Արցախի հարցերով արտասահմանում կայանալիք առաջիկա հանդիպումների եւ միջոցառումների մասին:

Արցախի Խորհրդարանի պատգամավորներն իրենց հարցերն են ուղղել եւ առաջարկներ ներկայացրել հանձնախմբի առաջիկա գործունեության կապակցությամբ:

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԳԱԶԱՅԻՆ ՀԱԲ ՀԻՄՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՌԴ նախագահի խոսնակ Դմիտրի Պեսկովն անդրադարձել է Թուրքիայում գազային հաբ հիմնելու թեմային՝ նշելով, որ այդ հարցը Կրեմլի օրակարգում է, եւ կողմերը շարունակում են դրա վերաբերյալ ծրագրեր գեներացնել: Այս մասին հաղորդում է «ՌԻԱ Նովոստի» լրատվական գործակալությունը:

Այս հարցին ավելի վաղ անդրադարձել էր ՌԴ փոխվարչապետ Ալեքսանդր Նովակը: Նա 2023-ին հայտնել էր, որ գազի կենտրոնի ստեղծման ծրագիրը կարող է մեկնարկել 2024-ին:

ԲՈՂՔՆԵՐ՝ ԶՈՐԱԿՈՉԻՑ

2024 թվականի ամառային զորակոչին քաղաքացիների իրավունքներին առնչվող հարցերը եղել են ՄԻՊ Անահիտ Մանասյանի ուշադրության ներքո: Այդ մասին պաշտպանի գրասենյակը հաղորդագրություն է տարածել: ՄԻՊ աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանումը՝զինծառայողների եւ նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժինը, շուրջօրյա ռեժիմով հետեւել է զորակոչիկների իրավունքներին վերաբերելի հարցերին: Ընդհանուր առմամբ ամառային զորակոչին ստացվել է 145 գրավոր եւ բանավոր բողոք: Բողոքների մեծ մասը վերաբերել է բժշկական հանձնաժողովների եզրակացությունների հետ անհամաձայնություններին, կրկնակի եւ ստուգիչ հետազոտություններ անցնելուն, տարկետումներին, զինկոմիսարիատից կամ բժշկական հաստատություններից զորակոչիկների առողջական վիճակին վերաբերելի փաստաթղթեր ստանալուն, փորձաքննություններին: Բարձրացված մյուս հարցերը վերաբերել են ընտանեկան պայմանների հիմքով տարկետում ստանալուն, եղբայրների՝ միեւնույն զորամասում ծառայելուն, «Պատիվ ունեմ» ծրագրով ծառայություն անցնելուն, ծառայության վայրեր նշանակելու վիճակահանությանը եւ այլ հարցերին: Աշխատակազմում գրավոր ընթացակարգով քննարկվել է 51 բողոք, 18-ի դեպքում իրականացվել է արագ արձագանքում, եւս 76 քաղաքացու հարցի լուծմանը պաշտպանը աջակցել է խորհրդատվության միջոցով: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում զորակոչին առնչվող հարցերով իրականացվել են հետեւյալ աշխատանքները՝

- բողոքների քննարկման շրջանակում պարզաբանումների պահանջով եւ կոնկրետ առաջարկություններով գրություններ են հասցեագրվել ՀՀ պաշտպանության նախարարություն,
- արագ արձագանքումների շրջանակում քննարկումներ են նախաձեռնվել կենտրոնական բժշկական հանձնաժողովի, զինկոմիսարիատների, ՊՆ մարդու իրավունքների եւ բարեվարքության կենտրոնի, ինչպես նաեւ առողջապահական կազմակերպությունների հետ,
- համակարգային բնույթ ունեցող հարցերի եւ պաշտպանի տարեկան հաղորդմամբ ներկայացված առաջարկների իրացման վերաբերյալ առանձին քննարկում է տեղի ունեցել ՊՆ եւ ԳՇ տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների մասնակցությամբ:

ՆՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՔՊ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

ՔՊ կուսակցության վարչության որոշմամբ՝ 2025 թ. սեպտեմբերի 20-ին կայանալու է կուսակցության հերթական համաժողովը:

Իսկ ի՞նչ է սպասվում կուսակցության համաժողովին:

ՔՊ կանոնադրության համաձայն՝ կուսակցության հերթական համաժողովը հրավիրվում է երեք տարին մեկ անգամ՝ վարչության որոշմամբ սահմանված ժամկետում եւ օրակարգով: ՔՊ վերջին համաժողովը տեղի էր ունեցել 2022 թ. հոկտեմբերին:

Համաժողովը նախագահում է վարչության կողմից որոշված վարչության անդամը:

Կուսակցության համաժողովին կարող են մասնակցել կուսակցության բոլոր անդամները, ինչպես նաեւ նրա անդամներից ընտրված պատվիրակները: Համաժողովին մասնակցության կարգը վարչության առաջարկով սահմանում է համաժողովը:

Մասնակցիների առաջարկությամբ համաժողովի ընթացքում փոփոխություններ եւ լրացումներ են կատարվում կուսակցության կանոնադրության մեջ եւ ծրագրում:

Համաժողովը քվեարկությամբ ընտրվելու է վարչության նոր կազմ. ընտրությունը կատարվելու է վարկանշային փակ քվեարկությամբ, որի ընթացքում նաեւ վարչության նախագահ են ընտրելու:

Օրինակ՝ կուսակցության նախորդ՝ 6-րդ համաժողովին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նախագահ ընտրվեց Նիկոլ Փաշինյանը:

ՔՊ կանոնադրության համաձայն՝ կուսակցության համաժողովին հաստատվում է նաեւ ԱԺ հերթական ընտրություններում կուսակցության ընտրական ցուցակում թեկնածուների՝ առնվազն առաջին երեք տասնյակը, իսկ դաշինքով ընտրություններին մասնակցելու դեպքում՝ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում թեկնածուների առնվազն երեք տասնյակը:

Հաստատման ընթացակարգը վարչության առաջարկով որոշում է համաժողովը:

Կուսակցության համաժողովում ընդունված որոշումները ընդունվում են համաժողովում ձայնի իրավունք ունեցող ներկաների ձայների մեծամասնությամբ, իսկ կուսակցության կանոնադրությունում եւ ծրագրում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու, ղեկավար եւ վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրության, մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի ընտրության, կուսակցության վերակազմակերպման եւ լուծարման մասին որոշումներն ընդունվում են համաժողովում ձայնի իրավունք ունեցող մասնակիցների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՊՕՐԻՆԱԲԱՐ՝ 2 ԱՄԻՍ ԱՆԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԵՂԵԼ

«Եթե նույնիսկ այս պահին Արմեն Աշոտյանին ազատ արձակեն, միեւնույնն է՝ նա 1 տարի 2 ամիս, ապօրինաբար, իր հայացքների ու հայրենասիրության համար գտնվել է անազատության մեջ», - այս մասին երեկ՝ օգոստոսի 29-ին, լրագրողների հետ զրույցում ասաց «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը:

Նա չցանկացավ լավատեսություն հայտնել եւ պնդել, որ սեպտեմբերի 15-ին Արմեն Աշոտյանն ազատ կարձակվի, ինչպես նշել են որոշ փորձագետներ:

«Եթե Փաշինյանն Արցախը չհանձներ, եթե մենք վատթարագույն մակարդակում չգտնվեինք մեր ստրատեգիական դաշնակցի հետ հարաբերությունների համատեքստում, եթե պատերազմի ժամանակ Հայաստանի համար օդային տարածքը մեր հարեւան եւ բարեկամ Վրաստանի եւ Իրանի հետ չփակվեր, եթե որոշ երկրների ղեկավարներ լկտիաբար չխոսեին Հայաստանի մասին, ես, ճիշտն ասած, թքած կունենայի՝հեծանի՞վ է քշում Փաշինյանը, թե՞ «սամոկատ»: Ես չեմ մեկնաբանելու իր հեծանվային վոյաժները»,-ասաց նա:

Անդրադառնալով քաղաքական իրավիճակին՝ ընդդիմադիր պատգամավորն ասաց, որ ՀՀ-ն միջազգային հարաբերություններում դարձել է օբյեկտ. առանց մեզ որոշում են, թե ինչ է տեղի ունենալու մեզ հետ:

«Երբեմն ասում են, որ մեզ կտեղեկացնեն, երբեմն դա էլ չեն ասում: Որեւէ մեկը իրական որեւէ գործընթացում ՀՀ-ին չի ներգրավում՝ որպես բանակցային կողմ: ՀՀ-ն որեւէ պահանջ չի ներկայացնում գերիների վերադարձի հետ կապված, որեւէ քննարկում չի ծավալում՝ կապված ՀՀ սուվերեն տարածքը ադրբեջանցի զինյալների կողմից լքելու վերաբերյալ: Այդ առումով ինձ միեվնույնն է՝նա հեծանի՞վ կքշի, թե՞ «սամակատ»»:

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻՆ

«Ջինված ուժերում իրականացվող վարժական հավաքների նպատակների եւ դրա առանձնահատկությունների մասին բազմաթիվ առիթներով խոսել եմ», - այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը:

«Այն, որ օրենսդրությամբ նախատեսված հավաքների սահմանումը չի համապատասխանում իրականացվող գործընթացին, դա միայն հարցի մի կողմն է:

Եթե խնդիրը սահմանագծի պահպանության իրականացումն է եւ ուսուցման, հմտությունների կատարելագործման հարցը, ժամանակի մեծ մասը իրականում նախատեսված է մարտական հերթապահության համար, ապա դա էլ պետք է սահմանվի օրենքով:

Երկրորդ, սահմանային անվտանգության եւ մարտական հերթապահությունից բխող խնդիրները պետք է առաջնահերթ լուծել կանոնավոր բանակի միջոցով, իսկ դրա համար ռեսուրսները պետք է ճիշտ թիրախների ուղղել, այլ ոչ թե բանակը փորձադաշտի վերածել:

Մեկ այլ կարեւոր խնդիր, որն անընդհատ քաղաքացիների դժգոհության առիթին է հանգեցնում:

Վարժական հավաքների մասնակցության որոշման հարցը, որը օրենքով մասնակի է կարգավորվում, իսկ արդարության սկզբունքներն ամբողջությամբ խախտված են:

Եթե վարժական հավաքները ռազմական ունակությունները կատարելագործելու եւ վերապատրաստելու նպատակ են հետապնդում, ապա ի՞նչ տրամաբանությամբ են հավաքների կանչվում 44-օրյա պատերազմի մասնակիցները:

Հասկանալի է, չէ՞, որ 44-օրյայի ակտիվ մասնակիցները կամ այդ ժամանակահատվածում ծառայած քաղաքացիները «մարգավիճակում» են եւ նրանց հետ նոր ուսուցման ծրագրերը, որոշ բացառություններով, ակտուալ չեն:

Սա հատկապես այն պարագայում, որ կան քաղաքացիներ, որոնք 44-օրյա պատերազմին չեն զորակոչվել կամ տարբեր պատճառներով չեն ներկայացել, իսկ վարժական հավաքներ կա՛մ ընդհանրապես չեն անցել կա՛մ անցել են 10-15 տարի առաջ:

Ստացվում է, որ վարժական հավաքի բուն խնդիրներն ամբողջությամբ չեն ծառայում իրենց նպատակին, եւ չի գործում արդարության եւ տրամաբանության սկզբունքը:

Դեռ չեմ խոսում ռեսուրս «քերելու» եւ կոռուպցիոն հնարավոր սողանցքների ու ռիսկերի մասին», - գրել է նա:

ԴԱՏԱԿԱՆ ՎՃԻՌ

«ԱՌՈՒՇԱՆՅԱՆԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԼԻՆԵԼ»

Առուշ Առուշանյանի հետ կապված կա դատական վճիռ, որի երեք հատվածներից մեկի հետ նա համաձայն չի եղել: Այս մասին երեկ՝ լրագրողների հետ զրույցում, ասաց ՀՀ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը՝ հավելելով, որ խոսքն Առուշանյանի կողմից Գորիսի քաղաքապետի պաշտոնը զբաղեցնելու արգելքի մասին է:



Նախարարը շեշտեց, որ Առուշանյանը տուգանքը վճարել էր, մնացյալ մասով էլ՝ համաձայնել:

«Ներկայացել է Սյունիքի մարզային պրոբացիայի ծառայություն, ծանուցվել է: Այնտեղ նրանց փաստաբանները հարցեր են առաջ քաշում, որի հետ ես՝որպես նախարար եւ պրոբացիայի ծառայության անունից խոսող մարդ, ասում եմ, որ համաձայն չեմ, բայց այստեղ մի կարեւոր նրբություն կա, որ մենք ունենք ընթացիկ դատական գործ, ուստի հատուկ կարծիք չասեմ», - նշեց Մինասյանը՝ պատասխանելով հարցին, թե արդյոք Առուշանյանը ենթակա՞ է կալանավորման, թե՞ ոչ:

Նրա խոսքով՝կա դատարանի վճիռ, որտեղ հստակ գրված է, որ Առուշանյանը չպետք է լինի քաղաքապետ:

«Այստեղ 2 տարբերակ կա՝կամ հրաժարական է տալիս մեր հարգարժան քաղաքապետը, կամ ավագանին, իմ կարծիքով, ունի այդ հիմքով անվստահություն հայտնելու լիազորություն», -ասաց նա՝հավելելով, որ պետք է սպասել առաջիկա նիստին, որը կայանալու է սեպտեմբերին:

Հիշեցնենք, որ պրոբացիայի ծառայությունը դիմել էր Գորիս համայնքի ավագանուն՝տեղեկացնելով, որ համայնքի ղեկավարը պետք է պաշտոնանկ արվի: Ավագանու նիստի մասնակից 14 անդամները միաձայն արձանագրել են, որ գրության պահանջն ավագանու գործառույթներից դուրս է, առկա է այդ գործընթացը ավագանու կողմից կազմակերպելու անհնարինության վիճակ:

Գորիսի համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը մեղադրվում է պաշտոնեական դիրքի չարաշահման, ինքնիրավչության, ինչպես նաեւ դիտավորությամբ այլ մարդու առողջությանը վնաս պատճառելու մեջ: Դատական ակտը մտել է ուժի մեջ, բայց Առուշանյանը չի կատարում կետերից մեկը՝ «հրաժարվել համայնքի ղեկավարի պետի պաշտոնից»: Ըստ դատավճռի՝նա 5 տարի չի կարող պաշտոն զբաղեցնել:

Իր հերթին պրոբացիայի ծառայությունը դիմել է դատարան՝Առուշ Առուշանյանի պատիժը ազատազրկմամբ փոխարինելու հայցով: Գործը Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վարսենիկ Մելքոնյանի վարույթում է: Նիստը նշանակված է սեպտեմբերի 3-ին:

Ավելի ուշ Առուշ Առուշանյանը դիմում էր ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայություն, որը մերժվել էր:

«Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գոռ Գասպարյանը, օգոստոսի 27-ին գրավոր ընթացակարգով քննելով Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի բողոքն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության, մերժել է այն», -հայտնել էին նախարարությունից:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ԴԱՏԱՎՈՐ ՓԵՍԱՅԻՆ

Ինչպես հայտնի է՝ 2024 թվականի հունիսի 13-ին Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ռուբիկ Մխիթարյանն Աժ պատգամավորների 70 կողմ ձայներով ընտրվեց Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի դատավոր:

Ռուբիկ Մխիթարյանի տեղափոխությունից հետո Վերաքննիչ քրեական դատարանում դատավորի տեղը թափուր է մնացել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ նրա փոխարեն ՀՀ վերաքննիչ դատարան պետք է տեղափոխվի Արարատի եւ Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հարություն Պետրոսյանը, որը ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի լուսանկարները, գրառումները լայքող դատավորներից մեկն է:

Սակայն, ինչպես նկատում ենք՝նրա՝ ՀՀ վերաքննիչ դատարան տեղափոխվելու գործընթացը ձգձգվում է, քանի որ մարզի դատարանի նախագահին փոխարինող չեն կարողանում գտնել:

Ի դեպ, Արարատի եւ Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հարություն Պետրոսյանը պատահական անձ չէ: Վերջինս ընդդիմադիր բժիշկ Տարոն Տոնոյանի փեսան է:

ԵՐԵՔ ԱՆՁԻ ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ

ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական երկրորդ բաժնում նախաձեռնված քրեական վարույթով պարզվել են «Վասաբի» ռեստորանից ավազակությամբ գումար հափշտակելու դեպքի հանգամանքները, այդ թվում՝ առերեւույթ հանցագործություն կատարած երեք անձանց ինքնությունը:

Քննությամբ, մասնավորապես, հիմնավորվել է, որ Արարատի մարզի 24 եւ 23-ամյա երեք բնակիչները, խմբի կազմում խոշոր չափերով գույք ավազակությամբ հափշտակելու դիտավորությամբ, նախնական համաձայնության գալով միմյանց հետ, 2024 թվականի հունվարի 14-ին՝ժամը 04:00-ի սահմաններում, դեմքերը բժշկական դիմակներով քողարկված, գնացել են Երեւան քաղաքի Աբովյան փողոցում գործող «Վասաբի» ռեստորան:

24-ամյա երիտասարդներից մեկը, հարվածելով ռեստորանի պահակի դեմքին, բռնություն է գործադրել նրա նկատմամբ, որի պատճառով վերջինս աստիճաններով գլորվել է ներքեւ՝ ստանալով կյանքի համար վտանգավոր ծանր մարմնական վնասվածքներ:

Այնուհետեւ երեքով ապօրինի մուտք են գործել ռեստորան, որտեղ մյուս երկու երիտասարդները, մետաղյա առարկայով վնասելով դրամարկղը, հափշտակել են շուրջ 750.000 ՀՀ դրամ կանխիկ գումար եւ հեռացել՝ հափշտակված գումարը հետագայում բաժանելով միմյանց միջեւ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա նշված երեք անձանց մեղադրանքներ են ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 6-րդ եւ 7-րդ կետերով: Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նշված անձանց նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու վերաբերյալ, որը բավարարվել է, սակայն հետագայում, դատարանի որոշմամբ նրանց նկատմամբ կիրառված խափանման միջոցը փոխվել է եւ ընտրվել է այլընտրանքային խափանման միջոց՝ տնային կալանքը:

Նախաքննություն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են հսկողություն իրականացնող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է «ԱՓԻՈՆ» ՏԵՍԱԿԻ ԹՄՐԱՄԻՋՈՑ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչությունը շարունակում է անզիջում պայքարը թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի՝ Հայաստանի Հանրապետության սահմանով անօրինական տեղափոխման ուղղությամբ:

Օրերս ԱԱԾ տնտեսական անվտանգության եւ կոռուպցիայի հակազդման գլխավոր վարչությունից ՊԵԿ ՄԴՊ վարչություն տվյալներ էին ստացվել, որ ԻԻՀ քաղաքացին մաքսանենգ ճանապարհով ՀՀ տարածք է ներմուծել թմրամիջոց եւ պատրաստվում է այն ուղարկել Ավստրալիայի Համագործակցություն:

Իրացնելով ստացված տվյալները՝ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության աշխատակիցները, ԱԱԾ տնտեսական անվտանգության եւ կոռուպցիայի հակազդման գլխավոր վարչության աշխատակիցների հետ համատեղ, «ՀայՓոստ» ՓԲ ընկերության Կապան քաղաքում գտնվող բաժանմունքներից մեկում զննման են ենթարկել «ՀայՓոստ»-ի միջոցով ԻԻՀ քաղաքացի Ս.Յ.-ի անունից Հ.Ի.-ի անվամբ Ավստրալիայի Համագործակցություն առաքվող միջազգային փոստային առաքանին: Արդյունքում հայտնաբերվել է 2 կաշվեպատ պայուսակ: Նշված պայուսակների պատերի մեջ՝հատուկ թաքստոցներում, եղել են ընդհանուր 233 գրամ քաշով «ափիոն» տեսակի թմրամիջոցին նմանվող մուգ շագանակագույն մածուցիկ եւ կոշտ զանգվածներ:

ՀՀ քրեական օրենսգրքի 399-րդ եւ 34-399-րդ հոդվածների հատկանիշներով կազմվել է մաքսանենգության դեպքի վերաբերյալ արձանագրություն, որի շրջանակում, թմրամիջոցի մաքսանենգություն կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով, նշված բաժանմունքի մոտից ձերբակալվել է ԻԻՀ քաղաքացին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՓՈԽԱՆՑԵԼ Է ԻՐԱՆՑԻ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ

Հայաստանում բանտարկված Իրանի 5 քաղաքացիներ փոխանցվել են Իրանի Իսլամական Հանրապետությանը: Այս մասին հայտնում է IRNA-ն:

Իրանի արդարադատության նախարարության Մարդու իրավունքների եւ միջազգային հարցերով տեղակալ Ասկար Ջալալիանը հայտարարել է, որ Իրանի քաղաքացիները փոխանցվել են երկու երկրների միջեւ Դատապարտված անձանց տեղափոխման մասին համաձայնագրի կիրարկումից հետո:

Նշվում է, որ Հայաստանի կառավարության հետ համագործակցությամբ եւ Հայաստանում Իրանի դեսպանատան համակարգմամբ չորեքշաբթի՝ օգոստոսի 28-ի կեսօրին, Երեւանում օդանավակայանում պաշտոնապես հանձնվել են հինգ բանտարկյալներ:

Սա իրանցի բանտարկյալների երրորդ խումբն է, որը վերջին մեկ տարվա ընթացքում փոխանցվել է Իրանին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 28-ից 29-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 116 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լրագրող Ոսկան Սարգսյանին բողոքով դիմել են Դիլիջան քաղաքի բնակիչներ, ովքեր չեն կարողանում օրինականացնել իրենց կառուցած շինությունները: Նրանք ասացին,որ նման բնակիչների թիվը հարյուրներով է: Այդ բնակիչներն ասացին, որ 2021թվականին, երբ Դիլիջանում համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակվեց ՔՊ-ական Դավիթ Սարգսյանը, քաղաքապետարանից իրենց ասել են, որ կարող են կադաստրում 25 հազար դրամ մուծել, որից հետո իրենց շինությունները կօրինականացվեն: Այդ գումարը հարկավոր էր ինքնակամ կառույցները չափագրելու աշխատանքների համար: Անցել է 3 տարի, սակայն այդ օբյեկտները չեն օրինականացվում, քաղաքապետարանն էլ մարդկանց սպառիչ պատասխան չի տալիս: Դիլիջանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում պարբերաբար հրապարակվում են Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի որոշումները, որոնցով օրինականացվում են ինքնակամ բազում կառույցներ: Բողոքող դիլիջանցիները կարծում են, որ այդ գործում առկա է կոռուպցիա: Բնակիչները հայտնեցին, որ ՀՀԿ-ի իշխանության օրոք գործարար Ռուբեն Վարդանյանը Դիլիջան քաղաքում գնել է մեծ քանակով անշարժ գույք, նրա պահանջով ստեղծվել է ճարտարապետական խումբ, առանց որի եզրակացության Դիլիջանում շինթույլտվություններ չեն տրվել, ինքնակամ կառույցները չեն օրինականացվել: Բողոքողները չգիտեն՝ այժմ այդ խումբը գործո՞ւմ է, եթե գործում է, ինչո՞ւ իրենց ինքնակամ կառույցների վերաբերյալ այդ խումբը որոշումներ չի կայացնում: Այս խնդիրների վերաբերյալ հարկ է ստանալ Դիլիջանի համայնքապետարանի պարզաբանումը, սակայն Դիլիջանի քոլեջի շրջանավարտ, անձնական գործում իր սեռը «արու» գրած համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը, խախտելով ՀՀ սահմանադրությունը եւ «Տեղեկատվական ազատության մասին» օրենքը, չի պատասխանում մեր լրագրողի տեղեկատվական հարցումներին:

ԴԵՌ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԵՆ

Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհի Դիլիջան համայնքի տարածքում՝ Դիլիջանի «Գետափ» ռեստորանի ճարակից տարածքում՝ Թեղուտ գյուղի մոտ, ճանապարհի եզրի շատ հատվածներ քանդված են, դրանք վտանգ են ներկայացնում երթեւեկության համար: 3 ամիս առաջ՝ մայիսի 27-ին, վարարած Աղստեւը շատ տեղերում քանդել է ճանապարհի եզրը: Զանգահարեցինք Դիլիջան համայնքի տարածքում միջպետական ավտոճանապարհի սպասարկում իրականացնող «Քյավառ սերվիս» ՍՊԸ-ի փոխտնօրեն Հրայր Մուսոյանին: Նա ասաց, որ ճանապարհի եզրի քանդված հատվածների վերականգնման նախագծերի մշակման աշխատանքեր են ընթանում, որից հետո դրանց շինարարության մրցույթ կանցկացվի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քաղաքաշինության կոմիտեն տեղեկացնում է, որ մասնագետների հավաստագրման անցումային կարգում կատարվել է փոփոխություն: Արդյունքում լուծվում է այն մասնագետների խնդիրը, որոնք, ունենալով կրթություն քաղաքաշինական գործունեության մեկ ոլորտում, սակայն փաստացի գործունեություն ծավալելով քաղաքաշինական մեկ այլ ենթաոլորտում, չէին կարողանում հավաստագրվել urban.e-gov.am հարթակում՝ որակավորման եւ աշխատանքային փորձի անհամապատասխանության պատճառով:

Հաշվի առնելով, որ խնդրին առնչվում էին ոլորտի բավական մեծ խումբ մասնագետներ՝ քաղաքաշինության կոմիտեի նախաձեռնությամբ փոփոխություն է կատարվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի «Քաղաքաշինության գործունեության սուբյեկտների լիցենզիաների դասակարգման եւ պատասխանատու մասնագետների հավաստագրման անցումային կարգը հաստատելու մասին» N 15-Ն հրամանում:

Երկրորդ հավելվածի 4-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ սահմանվել է, որ եթե հայտատուն հանդիսանում է պատասխանատու մասնագետ եւ ունի «Քաղաքաշինության մասին» օրենքի 21-րդ հոդվածով նախատեսված քաղաքաշինական գործունեության տեսակին եւ ենթատեսակին համապատասխան հայցվող համապատասխան ենթաոլորտում աշխատանքային 10 տարվա փորձառություն եւ համապատասխան որակավորում (բազային կրթություն), ապա կարող է քաղաքաշինության բնագավառի պետական ծառայությունների միասնական urban.e-gov.am հարթակի միջոցով դիմել պատասխանատու մասնագետի կարգի շնորհման եւ հավաստագրման համար: Օրինակ՝ «Ավտոմոբիլային ճանապարհներ» մասնագիտությամբ դիպլոմ ունեցող մասնագետն արդեն կկարողանա դիմել իր աշխատանքային փորձին համապատասխան մեկ այլ ենթատեսակի, օրինակ՝ բնակելի, հասարակական եւ արտադրական կառույցների շինարարության հավաստագիր ստանալու համար: Հայտը լրացնելիս «Կրթություն» բաժնում պետք է ընտրել «Բազային» տարբերակը:

Կարեւոր է նշել, որ անցումային կարգով հավաստագրվելու հնարավորությունը ստանալուց հետո արդեն հաջորդ շրջափուլի հավաստագիրը ստանալու համար մասնագետները պետք է վերարտակավորում անցնեն՝ ՀՀ կառավարության 2024 թվականի ապրիլի 4-ի N 478-Ն որոշմամբ հաստատված վերարտակավորման կարգի համաձայն:

Հիշեցնենք, որ մինչեւ 2024 թ. սեպտեմբերի 17-ը քաղաքաշինության բնագավառում գործող կազմակերպությունները պետք է դիմեն լիցենզիան դասակարգելու համար, այլապես այն կդադարի գործել: Իսկ մինչ այդ քաղաքաշինության բնագավառի մասնագետները պետք է հավաստագրվեն՝ լիցենզիայի ներդիրում որպես պատասխանատու մասնագետ ընդգրկվելու համար: Քաղաքաշինության կոմիտեն հորդորում է ոլորտի ներկայացուցիչներին շտապել եւ վեջնաժամկետին ընդառաջ՝ ծանրաբեռնվածությունը հաշվի առնելով եւ հայտերի ներկայացումը չթողնել վերջին օրվան:

Ա. ՍՐԿՊԻՈՆՅԱՆ

ԸՆԹԱՑԻԿ

ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի հրամանով՝հաստատվել է 2024-2025 ուսումնական տարում հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 5-12-րդ դասարանների յուրաքանչյուր դասագրքի համար ներդրումային գումարի չափը:

Հիշեցնենք՝ՀՀ պետական եւ ոչ պետական հանրակրթական դպրոցների 1-4-րդ դասարանների սովորողների դասագրքերը տրամադրվում են անվճար՝համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի: Նշված դասարանների դասագրքերի արժեքը հատուցվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:

Ազգային փոքրամասնությունների սովորողների դասագրքերը եւ բրայլյան տառատեսակով տպագրվող դասագրքերը եւս տրամադրվում են անվճար՝պետական միջոցների հաշվին:

5-12-րդ դասարաններում սովորողների դասագրքերը տրամադրվում են տարեկան վարձավճարով: Նշված դասարանների դասագրքերի համար սահմանվել է առնվազն 5 տարի օգտագործման ժամկետ: ՀՀ դպրոցներում հանրակրթության պետական չափորոշչի ներդրման գործընթացով պայմանավորված՝ 2-րդ, 5-րդ եւ 7-րդ դասարաններում, իսկ 2024/25 ուսումնական տարվանից նաեւ 3-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ դասարաններում ուսուցումն իրականացվելու է նոր ստեղծված դասագրքերով: Նոր դասագրքերի համար սահմանված վարձավճարի չափերը (բացառությամբ 2-րդ եւ 3-րդ դասարանների դասագրքերի, որոնք տրամադրվում են անվճար) հիմնականում նվազել են, որը պայմանավորված է դասագրքերի ստեղծման համար սահմանված նոր ընթացակարգերով:

Հիշեցնենք, որ ավելի վաղ ArmLur.am-ը զրուցել էր էներգետիկ հարցերով փորձագետ Արա Մարջանյանի հետ, ով մեզ հետ զրույցում դեռ հուլիս ամսին նշել էր, որ ամենաշատը 3 շաբաթում հնարավոր է վերականգնել ամեն բան:

Հավելենք, որ օրերս էլ պարզ դարձավ, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ) ՀԷՑ-ին հարուցել է վարչական վարույթ՝ 20 միլիոն դրամի չափով:

Հարուցված վարչական վարույթի արդյունքում հաստատվել է ընկերության կողմից ոչ հավաստի եւ ոչ սպառիչ տեղեկություն ներկայացնելու փաստը, ինչը ընկերության կողմից ընդունվել է:

Ինչպես արդեն նշել՝ հոսանքազրկումները մինչ օրս չեն դադարում, այդ իսկ պատճառով ArmLur.am-ը կապ հաստատեց ՀԷՑ-ի մամուլի խոսնակ Նատալյա Սարջանյանի հետ՝ պարզելու՝ արդյոք այդ հոսանքազրկումները կապվա՞ծ են ՀԷԿ-ի հրդեհի հետ, թե՞ այլ պատճառ կա այս անգամ:

Մեզ հետ զրույցում Նատալյա Սարջանյանն ասաց. «ՀԷԿ-ի խնդիրը լուծված է:

Ժամկետը մինչեւ օգոստոսի 10-ն է եղել, բայց մալուխային տնտեսության հետ կապված խնդիր կար, դրա համար մի փոքր երկարաձգվեց, բայց հիմա արդեն բոլոր աշխատանքները ավարտված են»:

Ա. ՍՐԿՊԻՈՆՅԱՆ

ՀԷՑ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԱՎԱՐՏՎԱԾ ԵՆ

Դեռ հուլիսի 6-ին «Երեւան հէկ»-ում հրդեհ էր բռնկվել, որի պատճառով էլ հաճախակի հոսանքազրկումներ էր էին լինում, հատկապես՝ կենտրոնում:

Այս խնդրով պայմանավորված՝ ՀԷՑ-ից հայտնել էին, որ, ըստ նախնական կանխատեսման, առաջացած խնդիրները կվերացվեն մինչեւ օգոստոսի 10-ը:

Չնայած այն հանգամանքին, որ հուլիսի 6-ից անցել է արդեն 1 ամիս եւ ավելի, իսկ օգոստոսի 10-ն էլ վաղուց անցել է, խնդիրը շարունակում է մնալ ակտուալ, այսինքն՝երեւանյան շատ հասցեներ շարունակում են պարբերաբար հոսանքազրկվել:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 16 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ»

Newmag Back To School ՓԱՌԱՏՈՆԻ ՀՈՎԱՆԱՎՈՐ

«ՎՏԲ-Հայաստան բանկի» աջակցությամբ Երեւանում տեղի ունեցավ Newmag Back To School մանկական գրքի փառատոնը: Միջոցառման շրջանակներում կայացավ Newmag հրատարակչության «Երազ» մանկական մատենաշարի երեք նոր մանկական գրքերի շնորհանդես: Բանկը նաեւ հանդես է եկել որպես «Էլեկտրոնիկի արկածները» գրքի հայերեն առաջին հրատարակության ֆինանսական գործընկեր:

Գրքի փառատոնն անցավ օգոստոսի 24-ին՝ Երեւանի «Երազ» այգում: Միջոցառումն ուղեկցվում էր երաժշտական շոու-ծրագրով, ուսուցողական խաղերով, դպրոցական նորաձեւ հագուստի ցուցադրությամբ եւ տոնական հյուրասիրությամբ: Պատանի ընթերցողներին ներկայացվեցին համաշխարհային մանկական գրականության երեք նոր գրքեր հայերեն լեզվով, այդ թվում, Եվգենի Վելտիստովի «Էլեկտրոնիկի արկածները» գրքի առաջին հայերեն հրատարակությունը:

««ՎՏԲ-Հայաստան բանկն» ամեն տարի աջակցում է երկրի մշակույթի եւ կրթության ոլորտների կարեւոր նախագծերին: Շատ կարեւոր է վաղ տարիքից սերմանել ընթերցանության նկատմամբ սեր՝ չստիպելով երեխային կարդալ, այլ սովորեցնել նրան սիրել գիրքը: Գրականության ազդեցությունն անձի ձեւավորման գլխավոր գործոններից է: Մենք ուրախ ենք, որ կարողացանք մեր ներդրումն ունենալ Newmag Back To School նախագծի իրականացմանը, որը նշանակալից իրադարձություն է պատանի գրքասերների կյանքում»,- մեկնաբանեց «ՎՏԲ-Հայաստան բանկի» գլխավոր տնօրեն-տնօրենության նախագահ Արա Ավագյանը:

«Ժամանակակից աշխարհը բազմաթիվ հնարավորություններ եւ ուղիներ է ընձեռում ստանալու տեղեկատվություն, որը հասանելի է տարբեր ձեւաչափերով: Համացանցի ճանաչելիությունը տարեցտարի աճում է, հատկապես, երիտասարդ սերնդի շրջանում: Գիրքը, որպես թղթային կրիչ, աստիճանաբար կորցնում է իր արդիականությունը: Մենք ոչ միայն խնամքով ընտրում ենք պատանի սերնդին ներկայացվելիք գրքերը, այլեւ մանրամասն մշակում ենք դրանց դիզայնն ու նկարազարդումները՝ ընթերցողի ուշադրությունն ու հետաքրքրությունը գրավելու համար: Նման օրինակ է նաեւ «Էլեկտրոնիկի արկածները» գիրքը, որն ընթերցելով դաստիարակվել է մի քանի սերունդ»,- նշեց Newmag հրատարակչության Տնօրեն Արտակ Ալեքսանյանը:

«ՎՏԲ-Հայաստան բանկը» վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

ԻՆՉ ԵՆ ՊԱՏՄՈՒՄ ԹՎԵՐԸ

ՆՎԱՋԵԼ Է ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԿԱՄՈՒՏԸ

Պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը դանդաղել է: Պետբյուջեի ընդհանուր եկամուտները 2024 թ. հունվարից մայիս ամիսներին կազմել են 1,029.0 մլրդ դրամ՝ աճելով 7.7%-ով, որը հունվար-ապրիլի համեմատ ցածր է 1.6 տոկոսային չափով:

Համավարակն ու պատերազմը Հայաստանի կառավարությանը ստիպեցին մեծացնել ծախսերն ու ավելի շատ պարտք վերցնել: Արդյունքում՝ 2020-ից պարտք /ՀՆԱ ցուցանիշը հատել է 63 տոկոսի շեմը: 60 տոկոսն այն սահմանագիծն է, որից բարձր պարտքը ռիսկային է համարվում:

Բյուջերի եկամուտների տեմպը, ըստ մի քանի հայտնի վերլուծությունների, հաճախ կապված է ծախսերի աճի եւ մեծ քանակի հետ:

Աճի տեմպի դանդաղման պատճառը, ըստ տնտեսագետների, հաճախ կառավարության այն որոշումներն են, որոնցով հավելյալ ֆինանսական հատկացումներ են իրականացվում, կամ պարզապես անխնա օգտագործում են պետական բյուջեն:

Բացի դրանից՝ հիշեցնենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թթ. ծրագրի առաջնահերթություններով՝ 2024 թվականին նախատեսվում էր.

• կենսաթոշակներին ուղղվող ծախսերի ավելացումը 28,8 մլրդ դրամով,

• առողջապահությանն ու կրթությանն ուղղվող ծախսերի ապահովումը ՀՆԱ-ի նկատմամբ՝ համապատասխանաբար 1,6% եւ 2,7%,

• ժողովրդագրական վիճակի բարելավման գծով լրացուցիչ ծախսերի նախատեսումը 15 մլրդ ՀՀ դրամով:

Բյուջեի հատկացումների, պակասուրդի կամ աճի տեմպերի ցուցանիշները ցույց են տալիս, որ Հայաստանի պետական բյուջեի ծախսն ավելի շատ է, քան եկամուտը: Հենց աս պատճառով է, որ բյուջեի աճի տեմպերը վերջին ամիսներին նվազել են:

2023 թվականին կանխատեսելով բյուջեի եկամուտների էական աճ՝ կառավարությունը ծրագրել է ավելի մեծ չափով մեծացնել ծախսերը եւ պակասուրդը:

Այսպես, կառավարության կանխատեսումների համաձայն՝ բյուջեի եկամուտները 2022 թվականին սպասվող ցուցանիշի համեմատ կաճեն շուրջ 11.3%՝ կազմելով 2,302.0 մլրդ դրամ: Պակասուրդը պլանավորվել է մեծացնել շուրջ 41.5%-ով՝ հասցնելով 288.9 մլրդ դրամի: Արդյունքում հնարավորություն կստեղծվի մեծացնել բյուջեի ընդհանուր ծախսերը շուրջ 15.3%-ով՝ հասցնելով մինչեւ 2,591.0 մլրդ դրամի: Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքում գերակշիռ դերը բաժին է ընկնում հարկային եկամուտներին՝ կազմելով ավելի քան 90%:

Ստացվում է, եթե կառավարությունը ծրագրում է բյուջեի դեֆիցիտն ապահովվել հարկատուների եկամուտների հաշվին, ապա առաջիկայում հարկային տոկոսների նոր խստացման կարելի է սպասել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ArLeAM»-Ի ԱՅԳԻՆԵՐՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ

«ArLeAM» ընկերության ինտենսիվ այգիներում մեկնարկել է խնձորի բերքահավաքը: Այգեկութն ազդարարել են այգիներ այցելած «Սոֆթ Կոնստրակտ» ընկերության աշխատակիցները:

Միջոցառումը մրցույթային բնույթ ուներ. ընկերության աշխատակիցները բաժանվել են 4 թիմերի, որոնք այգում աճող խնձորների անվանական անուններն են կրել՝Ռոյալ Գալա, Ռեդ Դելիշես, Գոլդեն Դելիշես Գրենիի Սմիթ: Հաղթող է ճանաչվել ամենաշատ բերք հավաքած թիմը՝ Գրենիի Սմիթը, որը 350 կգ խնձոր է քաղել:

«ArLeAM» ընկերության տնօրեն Լոն Խաչատրյանը նշել է, որ այգին ինտենսիվորեն՝ տարեկան միջինում 1000 տոննա բերք է տալիս.«Այգիներում կա խնձոր, ծիրան տանձ: Ունենք 4 տեսակի խնձոր: Առաջինը «Գալան» է հասունանում: Այն աշնանային ամենաքաղցր խրթխրթան խնձորների դասին է պատկանում: Հայկական շուկայում ամենապահանջված խնձորներից է: «Գալայից» հետո հասունանում են «Գոլդենն» ու «Ռեդ Դելիշեսը»: Վերջում հասունանում է «Գրենիի Սմիթը»: Այն ս շատ պահանջված կանաչ խնձոր է, որը համարում են ֆրանսիական: Մեր բոլոր ծառերն ունեն իտալական արմատներ», - ասել է նա:

Այգիների խնամքը ինտենսիվ կերպով մեկնարկում է դեռ ձմռանը՝ ծառերի էտով, իսկ արդեն գարնանն սկսում են ջրել այգիները, գյուղատնտեսական բաժինը զբաղվում է ծառերի պատվաստումով, բուժմամբ, պարարտացմամբ, մոլախոտերի հեռացմամբ այլ աշխատանքներով: Այգեգործների ուշադրության տակ է գտնվում նույնիսկ ոռոգման ջրի որակը չափաբաժինը, որը պետք է համապատասխանի կաթիլային համակարգով աճեցվող ծառերի չափանիշներին:

«ArLeAM»-ը նորարարական ապրանքանիշ է, որն առաջարկում է առանձնահատուկ հոգատարությամբ, առանց հավելանյութերի, ինքնուրույն աճեցված արտադրանք:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ»

Կավարտենք գնումները եւ մեր ուշադրությունը կկենտրոնացնենք կրթության որակի վրա՝ վերհիշել անցածը, գտնել կայքեր ու կրթական ռեսուրսներ, որոնց շնորհիվ ցանկացած թեմա ավելի հեշտ կյուրացվի ու կդառնա հիշարժան:

Այսօր մենք կներկայացնենք այդ ռեսուրսներից ընդամենը մի քանիսը.

• Հայկական կրթական միջավայր պորտալ-ում ներկայացված են տասնյակից ավելի կրթական կայքեր ու պորտալներ,

• այստեղ կգտնեք նաեւ տեսադասեր:

• «Քան ակադեմիան» հարուստ շտեմարան է, որտեղ մատչելի ու հետաքրքիր մոտեցումներով ներկայացված են թեմաներ բնագիտական եւ ճշգրիտ առարկաներից,

• բազմաբնույթ նյութեր կան նաեւ «Սեբաստացի» գիտա-հանրամատչելի հանդես-ում,

• ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացման հարցում abfinance.am-ը կդառնա Ձեր լավագույն ուղեկիցը,

• https://www.teachingenglish.org.uk/ հղումով կարող եք ուսումնասիրել անգլերեն:

• Հայտնի մարդկանց թանգարաններով ճանապարհորդությունը ավելի հետաքրքիր կդարձնի «Մեդիամաքս»-ի հատուկ նախագիծը,

• «Արմաթ» ճարտարագիտական աշխատանոցների նախագծերին կարող եք ծանոթանալ https://armath.am/hy հղումով:

Իսկ համացանցում առավելագույն ապահովության նպատակով հետեւեք «Ապահով համացանց Հայաստան»-ի նորություններին:

Նշված կայքերից որն էլ ընտրեք՝ չմոռանաք խորհրդակցել ուսուցիչների հետ: Ի վերջո, կրթությունը ստատիկ չէ, ուսումնական ծրագրերի բովանդակությունը փոփոխվում է, փոխվում են կարիքները:

Իսկ Ձեր ուշադրությունը բացառապես կրթությանը սեւեռելու նպատակով առաջարկում ենք օգտվել «Կոնվերս բանկի» առաջարկներից.

• Առցանց Snap վարկը կօգնի հաշված րոպեներում բավարարել ֆինանսական կարիքները,

• Իսկ C360 փաթեթների շրջանակում հաճախորդներին տրվող կից քարտը կարող եք տրամադրել Ձեր երեխային, վայրկյանների ընթացքում գումար փոխանցել քարտին ու վերահսկել ծախսերը:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 010-511-211:

«Կոնվերս բանկը» վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ՝ ԿԳՄՍՆ-ԻՑ

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՁԱԿՈՒՐԴԱՅԻՆ ՕՐԵՐԸ

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը դեռեւս 2023-ին հրաման է ստորագրել, որով հաստատել է հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2024-2025 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանները (1-ին, 4-րդ, 9-րդ, 11-րդ եւ 12-րդ դասարաններ):

2024-2025 ուսումնական տարվա ուսումնական պարապմունքները հանրակրթական հիմնական (ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ) պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 1-12-րդ դասարաններում սկսվում են 2024 թվականի սեպտեմբերի 2-ին, ավարտվում՝ 2025 թվականի մայիսի 23-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա, մայիսի 24-ին՝ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ եւ 34՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար:

Արձակուրդները՝ 2024-2025 ուսումնական տարում.

1) Ուսումնական պարապմունքների ընթացքում 3-12-րդ դասարանների սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2024 թվականի հոկտեմբերի 21-ից 27-ը ներառյալ, ձմեռային՝ 2024 թվականի դեկտեմբերի 23-ից 2025 թվականի հունվարի 5-ը ներառյալ, գարնանային՝ 2025 թվականի մարտի 24-ից 30-ը ներառյալ:

2) Առաջին դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2024 թվականի հոկտեմբերի 14-ից 27-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2024 թվականի դեկտեմբերի 23-ից 2025 թվականի հունվարի 19-ը ներառյալ, գարնանայինը՝ 2025 թվականի մարտի 17-ից 30-ը ներառյալ:

3) Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2024 թվականի հոկտեմբերի 21-ից 27-ը ներառյալ, ձմեռայինը՝ 2024 թվականի դեկտեմբերի 23-ից 2025 թվականի հունվարի 19-ը ներառյալ եւ գարնանայինը՝ 2025 թվականի մարտի 24-ից 30-ը ներառյալ:

Հաստատությունն անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ եւ այլն) կարող է հանրակրթական հիմնական կրթական ծրագիրը իրականացնել հեռավար ձեւով՝ ԿԳՄՍ նախարարի հրամանի համաձայն:

Նախարարությունն էլ անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ կատարելով փոփոխություններ ուսումնական պարապմունքների եւ սովորողների համար սահմանված արձակուրդների ժամանակացույցներում: Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում հաստատության դիմումի հիման վրա կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ այդ մասին 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնելով նախարարությանը:

Նախարարության ենթակայության հաստատություններում արձակուրդների ժամկետների փոփոխությունները, ինչպես նաեւ հաստատության կողմից լրացուցիչ արձակուրդի նախատեսումը կատարվում է հաստատության նախաձեռնությամբ, նախարարության համաձայնությամբ:

Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՊԱՐԱԼԻՄՊԻԿ ԽԱՂԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում կայացել է 2024 թվականի Պարալիմպիկ խաղերի բացման պաշտոնական արարողությունը, որին 184 երկրի ավելի քան 4000 մարզիկ է մասնակցել:

Ժամանակակից օլիմպիական շարժման պատմության մեջ առաջին անգամ Պարալիմպիկ խաղերի բացման արարողությունը տեղի է ունեցել մարզադաշտից դուրս՝ Փարիզի կենտրոնում:

Բացման արարողության մեկնարկին նախ վառվել է Պարալիմպիկ ջահը, որով տրվել է խաղերի մեկնարկը, ապա տեղի է նաեւ դրոշների շքերթը. Հայաստանի դրոշակակիրը եղել է պարաձնորդ Գրետա Վարդանյանը:

Խաղերի բացման արարողությանը մասնակցել են Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը եւ Միջազգային պարալիմպիկ կոմիտեի ղեկավար Էնդրյու Փարսոնսը:

Օգոստոսի 28-ից սեպտեմբերի 8-ը Փարիզում կայանալիք Պարալիմպիկ խաղերին Հայաստանն առաջին անգամ վարկանիշ նվաճած ներկայացուցիչներ կունենա:

Հայաստանի ներկայացուցիչներից առաջինը պայքարի դուրս կգա Սարգիս Ստեփանյանը. նրա մրցելույթը նախատեսված է օգոստոսի 30-ին: Հաջորդիվ՝ սեպտեմբերի 4-ին, մրցապայքարը կսկսի Սմբատ Կարապետյանը, իսկ սեպտեմբերի 6-ին՝ Գրետա Վարդանյանը: 2024 թվականի Պարալիմպիկ խաղերում 4400 պարաատլետ կմրցի 20 մարզաձեւում:

ՀԱՅ ՇԱԽՄԱՏԻՍՏՆԵՐԸ՝ ԱՌԱՔԱՏԱՐ ԴԻՐՔՈՒՄ

Մեր շախմատիստները շարունակում են մնալ առաջատարների շարքում Չեխիայի մայրաքաղաք Պրահայում ընթացող 2024 թվականի շախմատի Եվրոպայի պատանիների առաջնությունում: Հայաստանի շախմատի ֆեդերացիայից հայտնում են, որ 6 խաղափուլից հետո Տիգրան Համբարձումյանն ունի 5.5 միավոր եւ կիսում է 1-2-րդ հորիզոնականները մինչեւ 12 տարեկան պատանիների խմբում:

Ալեքս Սահակյանը ունի 5 միավոր եւ կիսում է 1-4-րդ հորիզոնականները մինչեւ 18 տարեկան պատանիների խմբում: Այս տարիքային խմբում Ռոբերտ Փիլիպոսյանը ունի 4.5 միավոր:

Բենիկ Ագասարովը ունի 5 միավոր եւ կիսում է 2-7-րդ հորիզոնականները մինչեւ 14 տարեկան պատանիների խմբում: Այս տարիքային խմբում Ռուդոլֆ Փաշիկյանը ունի 4.5 միավոր:

Վոլոդյա Թորոսյանը ունի 4.5 միավոր միմչեւ 14 տարեկան տղաների խմբում:

Անահիտ Մուրադյանը ունի 4.5 միավոր եւ կիսում է 5-8-րդ հորիզոնականները մինչեւ 18 տարեկան աղջիկների խմբում:

Անի Նահապետյանը եւ Սոնա Կրկյաշարյանը ունեն 4.5 միավոր մինչեւ 14 տարեկան աղջիկների խմբում:

Սոֆիա Բաղրամյանը ունի 4.5 միավոր եւ կիսում է 4-9-րդ հորիզոնականները մինչեւ 8 տարեկան աղջիկների խմբում:

ԼՈՒՐԵՐ

ԱՄԱՌԸ՝ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Լոռու մարզային գրադարանում ամռան ամիսներին իրականացվել են 19 ծրագիր եւ 12 ցուցահանդես. այցելությունների թիվը կազմել է 27922, նոր ընթերցողների թիվը՝ 2087:

Ամռան ծրագրերի մեկնարկը տրվել է Երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառումներով: Գրադարանի աշխատակիցներն այցելել են Վանաձորի բժշկական կենտրոն ու Երեխաների զարգացման կենտրոն եւ գրքեր նվիրել երեխաներին:

Ամառային ճամբարի շրջանակում երեխաներն այցելել են մշակութային հաստատություններ, քաղաքում գործող տարբեր արտադրամասեր, անցկացվել է կավագործության վարպետաց դաս:

ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ գրադարանը համալրվել է համակարգչային նոր սարքավորումներով, ինչի արդյունքում ընդլայնվել է գրադարանի ծառայությունների շրջանակը, մասնավորապես՝ մամուլի ենթաբաժնում տեղադրվել է EBSCO միջազգային հեղինակավոր ընկերության բազմալեզու տեղեկատվական շտեմարանը, որն ընթերցողներին հնարավորություն է ընձեռել օգտվել գիտական ամսագրերից եւ հոդվածներից:

Լոռու մարզային գրադարանի նախաձեռնությամբ Ստեփան Ջորյանի տունթանգարանում տեղի է ունեցել Երիտասարդների միջազգային օրվան նվիրված միջոցառում: Միջոցառմանը մասնակցել են տարբեր սերունդների գրողներ, ուսանողներ, դասախոսներ, գրականագետներ, գրականությամբ հետաքրքրվող անձինք: Կազմակերպվել են նաեւ ընթերցանության խթանմանը միտված միջոցառումներ, մասնավորապես՝ «Գրքասերներ» ակումբի ամփոփիչ հանդիպում, գրքի քննարկումներ, բարձրաձայն ընթերցանություն՝ «Կրթական կամուրջ» ուսումնական կենտրոնի սաների մասնակցությամբ: Ամռանը ուշադրության կենտրոնում էին նաեւ «Ընտանեկան գրադարանավար» ծրագրի շահառուները: Ակսել Բակունցի 125-ամյակի շրջանակում աշխատակիցներն այցելել են «Առաքելություն Հայաստանի» ՀԿ եւ ներկայացրել հետաքրքիր մանրամասներ Բակունցի կյանքից եւ ստեղծագործությունից:

Ամռան ընթացքում գրադարանի աշխատակիցներն անցել են մի շարք տեղական եւ միջազգային վերապատրաստումներ: Նպատակը երիտասարդ աշխատակիցների մասնագիտական տեղեկացվածության բարձրացումն է, նրանց համար մասնագիտական-կրթական տիրույթի ընդլայնումը:

ՎԱՆԴԱԼԻԶՄԻ ԱԿՏԵՐ

Ադրբեջանը թիրախավորվել է հայկական մշակութային ժառանգությունը ոչնչացնելու վրա՝ վանդալիզմի ակտեր կատարելով: Այս մասին «Պատմամշակութային ժառանգության խնդիրները հետխորհրդային շրջանում» թեմայով միջազգային համաժողովում, որն անցկացվում է օգոստոսի 29-ին Հայաստանի Գիտությունների ակադեմիայում, հայտնել է «Գեղարդ» գիտավերլուծաբանական ֆոնդի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը:

Նա նշել է, որ 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանն ակտիվացրել է այդ քաղաքականությունը՝ ջնջելով հայկական մշակույթի հետքերը Լեռնային Ղարաբաղում»: «Բաքուն բաց հայտարարել է, որ ոչնչացնելու է հայկական մշակութային ժառանգությունը Լեռնային Ղարաբաղում: Կատարվում է աղվանացման փորձ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքում: Այդ ժառանգությունը կամ կհամարվի իբր ադրբեջանական մշակույթ, կամ կոչնչացվի, ինչպես արել է Բաքուն մինչեւ այժմ»,- ավելացրել է Ղազարյանը:

● Սեպտեմբերի 6-ին՝ ժամը 20:00-ին, «Թատրոն տանիքում» կցուցադրվի «Դեկամերոն» տխուր-կատակերգությունը՝ Բոկաչիոյի համանուն երկի հիման վրա: Տոմսերի արժեքը՝ 6.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչ կարգով է գրավի առարկայի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածվում:

Սամվել Հարությունյան 42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գրավառու գրավոր՝ պատշաճ ձեւով, ծանուցում է գրավատուին առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին (բռնագանձման ծանուցում): Գրավատուն իրավունք ունի դատական կարգով վիճարկելու սույն հոդվածի համաձայն գրավի առարկայի բռնագանձման օրինականությունը, որի պարագայում դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը: Դատարանը կարող է կասեցնել գրավի առարկայի բռնագանձման ընթացքը, եթե գրավատուն կտրամադրի գրավի առարկայի արժեքին համարժեք ապահովում՝ գրավառուի հնարավոր վնասները հատուցելու համար: Բռնագանձման ծանուցումը պարտապանին պատշաճ ձեւով հանձնելուց հետո գրավառուն իրավունք ունի գրավի առարկան վերցնելու իր տիրապետման տակ (եթե շարժական գույք է), ինչպես նաեւ խելամիտ քայլեր ձեռնարկելու գրավի առարկան պահպանելու, սպասարկելու եւ դրա անվտանգությունն ապահովելու համար:

Բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո գրավառուն սույն օրենսգրքի ուժով իրավունք ունի սույն օրենսգրքի 195-րդ հոդվածի պահպանմամբ գրավատուի անունից իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով, եթե գրավատուն եւ գրավառուն գրավի առարկայի իրացման այլ կարգ չեն նախատեսել:

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ գրավառուն պարտավոր է գրավի առարկան իրացնել տվյալ պահին շուկայում գործող ողջամիտ գնով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ, թե ինչ է իրենից ներկայացնում գնաճը:

Երանուհի Եփրեմյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը որոշակի պարբերականությամբ ՀՀ տնտեսության առանձին հատվածների համար հաշվարկում է գների շարժը ներկայացնող ժամանակային շարքեր՝ գների ինդեքսներ: Օրինակ՝ սպառողական շուկայի համար՝ սպառողական գների ինդեքս, ընդհանուր տնտեսության համար՝ ՀՆԱ-ի դեֆլյատորը, որը տնտեսությունում արտադրված բոլոր ապրանքների եւ ծառայությունների գների միջին աճն է, արտաքին առեւտրում՝ արտահանման գների ինդեքս, ներմուծման գների ինդեքս եւ այլն: Ցանկացած ինդեքսի հավելաճի տեմպն այդ հատվածի կամ ճյուղի գնաճն է եւ հաճախ ունի հաշվարկման մեթոդական առանձնահատկություն: Ինչպես աշխարհի բոլոր երկրներում, այնպես էլ ՀՀ-ում գնաճ տերմինը հիմնականում կիրառվում է, երբ խոսքը գնում է սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) հավելաճի տեմպի մասին: Այն թեեւ ամբողջովին չի արտացոլում տնտեսությունը, սակայն առավել ընկալելի է հասարակության համար:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ գնաճը սպառողական գների ինդեքսի հավելաճի տեմպն է: Սպառողական գների ինդեքսը ներկայացնում է սպառողական շուկայում գների շարժը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեկ Փարիզի կենտրոնում տեղի է ունեցել պարալիմպիկ խաղերի բացման արարողությունը:

Արարողության մեկնարկին նախ վառվել է Պարալիմպիկ ջահը, որով տրվել է խաղերի մեկնարկը, ապա տեղի է ունեցել նաեւ դրոշների շքերթը. Հայաստանի դրոշակակիրը եղել է պարածանրորդ Գրետա Վարդանյանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+11 + 16	+28 + 33
Կոտայքի լեռներ	+10 + 16	+28 + 30
Կոտայքի նախալեռներ	+20 + 23	+35 + 36
Գեղարքունիք	+11 + 16	+25 + 28
Լոռի	+ 14 + 18	+29 + 33
Տավուշ	+ 18 + 22	+31 + 36
Արագածոտնի լեռներ	+ 11 + 14	+17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+16 + 18	+28 + 31
Արարատ	+ 23 + 25	+38 + 39
Արմավիր	+ 20 + 22	+37 + 38
Վայոց ձորի լեռներ	+11 + 14	+29 + 31
Վայոց ձորի նախալեռներ	+21 + 23	+36 + 39
Սյունիքի հովիտներ	+21 + 24	+36 + 39
Սյունիքի նախալեռներ	+ 14 + 17	+30 + 32
ԼՂՀ	+ 13 + 16	+29 + 32
Երեւան	+30 + 32	+ 36 + 38

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.8.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*